«ԻՄ ԱՌԱՋԻՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՔԱՅԼԸ» ԱՐՇԱՎԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

---

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Արշավի անցկացնող է հանդիսանում «Մքքանն Էրիքսոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Արշավի Անցկացնող)՝ Mastercard միջազգային վճարային համակարգի՝ (այսուհետ՝ Պատվիրատու) պատվերով:

1.2. Արշավի անվանումը՝ «Իմ առաջին ֆուտբոլային քայլը»:

1.3. Արշավի անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն:

1.4. Արշավի իրականացման ժամկետը՝ 13.03.2026 թ. 20:00-ից մինչև 31.03.2026 թ. 23:59 (Երևանի ժամանակով):

1.5. Արշավը կրում է գովազդային-վիճակախաղի, մշակութային-սպորտային և սոցիալական բնույթ և ուղղված է Mastercard բրենդի առաջխաղացմանն ու Հայաստանում ֆուտբոլի հանրայնացմանը:

1.6. Արշավը վիճակախաղ կամ ազարտային խաղ չէ և չի կարգավորվում ՀՀ «Վիճակախաղերի մասին» օրենքով:

1.7. Արշավին մասնակցությունը կամավոր է և անհատույց: Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

1.8. Սույն Կանոնները հրապարակվում են Պատվիրատուի՝ Mastercard Armenia-ի պաշտոնական կայքէջում՝ www.mastercard.am: Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.9 Պատվիրատուն և Արշավի Անցկացնողը իրավունք ունեն փոփոխություններ կատարել սույն Կանոններում՝ հրապարակելով թարմացված խմբագրությունը Պատվիրատուի պաշտոնական կայքէջում: Մասնակիցները պարտավոր են ինքնուրույն հետևել տեղեկատվության արդիականությանը և համարվում են ծանուցված՝ նման հրապարակման պահից:

1.10 Արշավի շրջանակում Պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Արշավի Անցկացնողը:

1.11. Պատվիրատուն և Արշավի Անցկացնողը պատասխանատվություն չեն կրում Արշավի անցկացման ժամկետների փոփոխության կամ հետաձգման, ինչպես նաև այլ փոփոխությունների համար, որոնք պայմանավորված են անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հանգամանքներով և/կամ իրենց իրավասությունից դուրս պատճառներով:

2. Մասնակցության պայմաններ

2.1. Մասնակցության հայտը երեխայի անունից ներկայացնում է նրա ծնողը կամ օրինական ներկայացուցիչը: Երեխայի անունից արշավին կարող են մասնակցել միայն 18 տարին լրացած, գործունակ ֆիզիկական անձ այն ծնողները կամ օրինական ներկայացուցիչները, ովքեր հանդիսանում են ՀՀ քաղաքացի կամ ունեն բնակության թույլտվություն և մշտապես բնակվում են ՀՀ տարածքում: Մասնակցության համար անհրաժեշտ է 2026 թ. մարտի 13-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ներկայացնել մասնակցության հայտ՝ համաձայն սույն պայմանների 2.3 կետում սահմանված կարգի:

2.2. Արշավի հերոս կարող են լինել միայն 7–9 տարեկան երեխաներ՝ 105–135 սմ հասակով:

2.3. Մասնակցության համար անհրաժեշտ է 2026 թ. մարտի 13-ի 20:00-ից մինչև մարտի 31-ի 23:59:00 (Երևանի ժամանակով) ներկայացնել հայտ՝ ստորև նշված եղանակով՝

- Instagram սոցիալական հարթակում ունենալ բաց օգտահաշիվ արշավի անցկացման ողջ ընթացքում:
- Բաժանորդագրված լինել @mastercard_armenia ինստագրամյան էջին:
- Նկարահանել մինչև 30 վայրկյան տևողությամբ տեսանյութ, որտեղ մասնակցի կամ օրինական ներկայացուցչի երեխան մեկնաբանում է ցանկացած UEFA Champions League 2026 ֆուտբոլային հանդիպում:
- Տեսանյութը հրապարակել Instagram-ում՝ նշելով #priceless հեշթեգը և @mastercard_armenia ինստագրամյան էջը:

2.4. Արշավի Անցկացնողը կարող է մերժել հայտը, եթե մասնակցության հայտ ներկայացրած անձի ինստագրամյան օգտահաշիվը փակ է, կեղծ է կամ թույլ չի տալիս հաստատել մասնակցի ինքնությունը:

2.5. Տեսանյութերը պետք է լինեն օրիգինալ և հրապարակված ծնողի կամ պաշտոնական ներկայացուցչի էջում:

2.6. Տեսանյութերը չպետք է պարունակեն՝

- հայհոյանք կամ բռնություն,
- ալկոհոլի, ծխախոտի, ազարտային խաղերի գովազդ,

- երրորդ անձանց մտավոր իրավունքների խախտում,
- օրենքի խախտում։

Նման նյութերի հրապարակման պատասխանատվությունը կրում է Մասնակիցը։

2.7. Երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը, մասկացելով Արշավին, միաժամանակ հաստատում է, որ ունի երեխայի շահերը ներկայացնելու իրավասություն և տալիս է համաձայնություն՝

- երեխայի մասնակցության,
- երեխայի պատկերների, ձայնի օգտագործման, տեսանկարահանման և լուսանկարահանման՝ առանց վարձատրության,
- իր և երեխայի անձնական տվյալների մշակման՝ համաձայն ՀՀ օրենքի,
- երեխայի առողջական հակացուցումների բացակայության,
- միջոցառման օրը երեխային «Պուշկաշ Արենա» մարզադաշտ ուղեկցելու պարտավորության։

2.8. Մասնակիցը տալիս է կամավոր և անհատույց համաձայնություն երեխայի պատկերների և ձայնագրությունների անժամկետ օգտագործման համար՝ տեղեկատվական, գովազդային և սոցիալական նպատակներով՝ ցանկացած տարածքում և առանց լրացուցիչ այլ համաձայնության։

2.9. Արշավի Անցկացնողը կամ պատվիրատուն կարող են մերժել մասնակցության հայտը, եթե

- Հրապարակված տեսանյութը չի համապատասխանում արշավի թեմային,
- Առկա է ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնության բացակայություն,
- Կեղծ փաստաթղթեր,
- Առկա է որևէ օրենսդրական խախտում։

2.10. Տեխնիկական խնդիրների արդյունքում մասնակցության անհնարինության դեպքում Արշավի Անցկացնողը պատասխանատվություն չի կրում։

2.11. Արշավի Անցկացնողի և Պատվիրատուի աշխատակիցները, նրանց ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք չեն կարող հանդիսանալ Արշավի հաղթող։

3. Արշավի ամփոփում

3.1 Արշավը կամփոփվի երկու փուլով՝

- Առաջին փուլով Արշավի ժյուրիի կազմը ներկայացված հայտերից կընտրի լավագույն 10 տեսանյութ, որոնք կանցնեն եզրափակիչ փուլ՝ հաշվի առնելով, բայց և չսահմանափակվելով հետևյալ պայմաններով՝

    - արշավի պայմաններին համապատասխանություն,
    - տեսանյութում արհեստական բանականության չկիրառում,
    - յուրահատկություն,
    - ստեղծարար մտածողություն։

- Երկրորդ փուլով 10 լավագույն տեսանյութերի միջև պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ https://random.org) կընտրվի մեկ հիմնական և երկու պահեստային հաղթող։

3.2. Արշավի ամփոփումը կկազմակերպվի մինչև 2026թ. ապրիլի 10-ը ներառյալ։ Առաջին և երկրորդ փուլերի օրվա և ժամի մասին մասնակիցները հավելյալ կտեղեկացվեն, ինչպես նաև համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Mastercard-ի ինստագրամյան հարթակում։

3.3. Արշավի Անցկացնողը պարտավորվում է՝
● Ապահովել մասնակցության հավասար պայմաններ բոլոր թույլատրված մասնակիցների համար,
● Ապահովել Արշավի անցկացման թափանցիկությունը,
● Չհրապարակել արդյունքները մինչև դրանց պաշտոնական հայտարարումը։

3.4. Մասնակիցներն իրավունք ունեն՝
● Ստանալ տեղեկատվություն Արշավի պայմանների և անցկացման կարգի վերաբերյալ,
● Դիմել Արշավի Անցկացնողին՝ սույն Կանոնների դրույթների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար։

4. Պարգևատրում

4.1. Եզրափակիչ փուլ անցած և պատահականության սկզբունքով ընտրված հաղթող մասնակցին կտրամադրվի ՈՒԵՖԱ Չեմպիոնների Լիգայի եզրափակիչ խաղի մասնակցության փաթեթ(մայիսի 29-ից մինչև 31)՝ երկու անձի համար՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի և երեխայի համար(այսուհետ՝ Պարգևատրում), որը կներառի հետևյալը՝

- Բացառիկ հնարավորություն երեխայի համար՝ խաղադաշտ դուրս գալ եզրափակիչ փուլ անցած ֆուտբոլային երկու թիմերից մեկի ֆուտբոլիստի հետ ՈՒԵՖԱ Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղին,
- Մասնակցություն նախապատրաստական միջոցառումներին,

- ՈՒԵՖԱ Չեմպիոնների Լիգայի եզրափակիչ խաղի երկու տոմս. էլեկտրոնային տոմսերը ուղարկվում են Արշավի Հաղթողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ոչ ուշ, քան 2026 թվականի մայիսի 30-ը,
- էկոնոմ դասի երկու ավիատոմս (հետադարձով) (չվերթը կարող է լինել ուղիղ կամ տարանցիկ՝ ըստ Արշավի Անցկացնողի հայեցողության) դեպի եզրափակիչ խաղի երկիր՝ Հունգարիա,
- երկու գիշերվա կացություն երկու անձի համար հյուրանոցի ստանդարտ դասի սենյակում՝ ներառյալ նախաճաշ,
- Օդանավակայան-հյուրանոց-օդանավակայան տրանսֆեր:

4.2. Հաղթող մասնակիցը ինքնուրույն է հոգում ճամփորդության հետ կապված բոլոր այն ծախսերը, որոնք ներառված չեն Պայմանների 4.1 կետում նշված Պարգևատրման նկարագրում:

4.3 Արշավի Անցկացնողը կամ Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում ֆուտբոլային խաղի երկիր մեկնելու համար նախատեսված մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի համար, բացի համապատասխան պաշտոնական հրավերի տրամադրումից՝ հերթագրման աջակցման համար: Մասնակցին դեսպանատան/հյուպատոսության կողմից տվյալ երկրի մուտքի արտոնագրի (վիզայի) չտրամադրման, ինչպես նաև մասնակցի՝ մեկնման անհնարինության դեպքում Արշավի Անցկացնողի կամ Պատվիրատուի կողմից չի սահմանվում որևէ փոխհատուցում:

4.4 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի կամ որևէ այլ տեսակի փոխհատուցման հետ:

4.5. Հաղթող մասնակցի հայտարարումից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Արշավի Անցկացնողի ներկայացուցիչը կապ է հաստատում հաղթողի հետ՝ ճշտելու այն անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են 2026 թվականի մայիսի 30-ին ք. Բուդապեշտում ֆուտբոլային հանդիպումից առաջ նախատեսված հանդիսավոր արարողությանը նրա Երեխայի մասնակցությունը կազմակերպելու համար:

4.6. Պարգևատրումը ստանալու համար Հաղթողը պարտավոր է հաղթող ճանաչվելու մասին ծանուցումը ստանալու պահից ոչ ուշ, քան 1 (մեկ) օրացուցային օրվա ընթացքում Արշավի Անցկացնողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը/տվյալները՝

1. Անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակ,
2. Երեխայի ծննդյան վկայական,
3. Փաստացի բնակության հասցե՝ փոստային ինդեքսով,
4. Հաստատում, որ Երեխան միջոցառմանը մասնակցելու համար չունի բժշկական որևէ հակացուցում,
5. Երեխայի հասակի հաստատում՝ Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան (105–135 սմ),

6. Հաստատում, որ երեխան հանդիսավոր արարողությանը կմասնակցի մուգ գույնի սպորտային կոշիկով՝ առանց կոշիկի վրա որևէ բրենդի նշման, կամ Adidas բրենդի մուգ գույնի կոշիկով,
7. Պարգևատրման ստացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տվյալներ (Արշավի Անցկացնողի պահանջով)։

4.7. Արշավի Անցկացնողը պատասխանատվություն չի կրում՝

- Պարգևատրման ստացման համար անհրաժեշտ տեղեկությունների/փաստաթղթերի չստացման կամ ուշ ստացման համար՝ Մասնակցի մեղքով, կապի կազմակերպությունների մեղքով կամ Արշավի Անցկացնողից անկախ այլ պատճառներով,
- Սույն Կանոններով նախատեսված պարտականությունների Մասնակիցների կողմից չկատարման (կամ ոչ պատշաճ/ուշ կատարման) համար,
- Մասնակիցների կյանքի, առողջության, բարոյական և/կամ հոգեբանական վնասների համար՝ արշավին նրանց մասնակցության հետ կապված։

4.8. Արշավի Մասնակցի հրաժարվելու, սույն Կանոնների պահանջները չկատարելու, սահմանված ժամկետներում և սահմանված կարգով պարգևատրումը չստանալու կամ մրցանակի ստացման անհնարինության այլ պատճառների դեպքում, որոնք կախված չեն Արշավի Անցկացնողից, Մասնակիցը կորցնում է պարգևատրում ստանալու իրավունքը։ Նման դեպքում նախապատվությունը կտրվի հաղթող հաջորդ մասնակցին՝ ըստ հերթականության։